72. ՎԻՃԿՐԱՐ

Կէղնի ու չէղնիր խեղճ մարթ մի, կնիկ մի լե կէղնի։

Կնիկ ասաց.—Մա՛րթ, մենք շատ խեղճ ենք, հ՚օրի՞ն չէրթասպանիս։

Մարթն ասաց.— Իմ ծեռնեն պան չիգար, ի՞նչ պան պիտի էնիմ։

Կնիկն ասաց.—Մա՛րթ, հ՚ոմեն կէրթան վիճակ կպանան, տյուն էլ է կնա վիճակ պաց։

Մարթն ասաց.—Աղեկ, կնիկ, ես լե կէրթամ պանամ։

Մարթ կնաց նստավ յոթ ճամխու պաժին, տեսավ թակավորու կնիկն էկավ խառցուց.— Ի՞նչ մարթ ես։

Մարթն ասաց.—Վիճակ կպանամ։

— Շատ աղեկ,—ասաց թակավորի կնիկը։ Թակավորի կնիկն ասաց.— Ես էրկու խոքով եմ, իմ փորու միչի ճիժն ի՞նչ ա՝ ախչի՞կ ա, չխո տղա՞ յա։

Մարթն ասաց.—Կնա՛ էն կլուխ, արի էս կլուխ, ասեմ քեզի ի՚նչ ա։

Կնիկ կնաց էն կլուխ՝ էկավ էս կլուխ։ Սորա հառցուց.—Դե ասա, ի՞նչ ա։

Մարթն ասաց.—Կիտիլի՝ օղլան տըր, կյալիլի՝ կրզ տըր[1]։

Կնիկ կնաց ուր տուն, թակավորին ասաց.—Ես էսօր վիճկրար մ՚իմ տեսի, վիճա՛կ եմ պացեր, էտա մարթ ձի ասաց՝ «Քու փորու միչի ճիժ ես կիտեմ ինչ ա», ասաց՝ «Կիտիլի օղլան տըր, կյալիլի կըզ տըր»։

---

1 Գնալը՝ տղա է, դալը՝ աղջիկ (Ս. Բ.)։

— Աղեկ, կնիկ,— ասաց թակավոր,—որ օղորթ էղնի՝ աղեկ ա։

Ժամանակն էկավ պառկելու, թակավորի կնիկ պառկավ՝ սլերեց աղչիկ մի, տղե մի։

Թակավոր կանչեց մարթուն, ասաց.—Մա՛րթ, տու շատ աղեկ վիճակ կպանաս, ա՛ռ քըղի հարիր օսկի, քու հա՛ղ, կնա՛։

Կմնա, օր մի կող կմտի թակավորի խաղինեն կկողնա տանի։ Թակավոր կկանչա վիճակ սլացողին, կասա.—Էսօր իմ խաղինեն կո՛ղ ա մտեր, վիճակ պաց օր իմ կող պռնեմ։

Մարթն ասաց.—Աղեկ, թակավոր, սլանամ, քառսուն օր, օ՛ր տուր ձի։

Կողեր լե քառսուն կող կէղնին։ Մարթը կէրթա կնստի տուն։ Ուր կնկան անուն Գյուլո կէղնի։

Մարթ կասա.—Գյո՛ւլո, մենք օր էսա կող չխանեցինք. թակավոր մեր կլուխ կզանի, էսօր կնաց, մնաց եռսունևին օր. էմեկել օրն էլ կանցնի, կմնա եռսունևութ օր։ Գյո՛ւլո, մնաց եռսունևութ օր։

Հ՚ըմեն օր ըսըմլա ասելով եռսունխինգ օր կընցնի, կմնա խինգ օր։ Խինդ օր օր կմնա, քառսուն կողն էլ կուկան խայու տուն։ Կուկան զուրանք կթալեն խայու մոտ, կընկնին օտաց ու ծեռաց, կասեն.— Ասու սիրուն էղնի, մենք էրեր ենք, տու մ՚էներ, խաղինեն մենք ենք կողցեր, իմալ կիտես՝ էմալ էրա, մենք տանք քըղի։

Մարթն ասաց.—Հա՞, ես չքիտի՞ ծեր մոտն էր, ես մախսուզ էրեցի, օր ծեզի թակավորի ծեռք չիտամ։

Էտ տարած փարեք հ՚ըմեն կուտա քառսուն կոզի շալակ, կէրթան քաղքեն տուրս, սար մի կխորեն։ Կիշեր կթողնեն կէրթան, մարթն էլ կէրթա ուր տուն։

Օրը կխլըսի, թակավորը կկանչա մարթուն, կասա.—Արի տեսնիմ քու ասած օր խըլըսավ, արի փարեն խան, վիճակ սլաց։

Մարթն ասաց.—Դոր օր կպանամ, քանի կպանամ, տեղ մի նշանց չի տար, պետք ա տուն կաս իմ խետ, էրթանք՝ քաղտուս ոըմս թալիմ, չխո ճար մի չկա։

Թակավորն ա, կառնի ուր մարթիկ, վիճակ պացող մարթ, պամ էլ է ասկյար, իրարու խետ կէրթան սար։

Թակավոր կասա.— Դե, վիճկրար, էսա փարեն խան, չխանես քու կլուխ կկտրեմ։

Վիճկրարն ա, վիճակ կպանա, ոըմս կթալա, կասա.—Ըս տըղրանք կուտա նշանց, բալե չըմ կիտեր ընչ տեղն ա։ Յան բուրտա տըր, յան օրտա տրր, տեղվաթ պունըն բաշընտա տըր[1]։

---

1 Կամ այստեղ է, կամ այնտեղ, գանձը սրա գլուխն է (Ծ. Բ.)։

էն տեղ կփորա, խազինից քիչ պամ ի կելնի։

Թակավոր ասաց.—Վիճկրա՛ր, մեկելտանք լե խան, էսի մընակ չէ։

Վիճկրարն ասաց.—Թակավո՛ր, մը՛ վախենար, էսոր խանող հ՚ըմեն էլ ա կխանա։

Վիճկրար էտոր մոտ ուրիշ տեղ մը լե կուտա փորել, խազինեն ինչ օր կուրուաեր էլ՝ հ՚ըմեն կխանա կուտա թակավոր։ Խազինեն կառնին չաղամաթով կէրթան։

Կմնա քանի մի օր, թակավորի կնիկ կլոխկնա։ Մատնինկ կխանա կտնա քարիմ, ինք կէրթա ներս կլոխկնա։ Կելնի շորեր խակնի. մատնինկ կմոռնա տեղ, կթողնի կէրթա։ Օր մի կընցնի մեչ, կիշկա՝ ծեռաց մատնինկ չկա, կասա. «Կա ու չկա լոխկնալու վախտ խանեցի տրեցի քարին, մոռցա տեղն էկա»։ Կելնի կէրթա մատնինկն իշկա, մատնինկ տեղ չկա, կուկա, թակավորին կասա.—Թակավո՛ր, ես կացի լոխկցա, մատնինկ տրի քարին, հ՚ելա շորերս խաքա, մատնինկ մոռցա տեղն, էկա։

Թակավոր կասա.—Կնիկ, մը՛ վախընար, մատնինկ չկուրուսիր, վիճկրար կկանչեմ՝ վիճակ կուտամ պանալ, մատնինկ կկտնիմ, վի՛ր մոտն հ՚ելավ, կլուխ կզտնիմ։

Թակավոր վիճկրրրին կկանչա կասա.—Արի՛, իմ կնկան մատնինկն ա կուրուսեր, վիճակ պաց, տեսնինք ո՞րն ա վերցեր ա։

Վիճկրար կասա.—Շա՛տ աղեկ, թակավոր, ապրած, վիճակ կըպանամ, իրեք օր, օ՛ր տուր, մատնինկն կկտնիմ։

Վիճկրար ըս էմլա կասա, կելնի կուգա տուն, կասա.—Գյո՛ւլո, տսված քու տուն ավիրա, էս ի՛նչ փորցանք էր էցկեցիր զիս, էսա մատնի՞նկն իմալ քըտնիմ։

Գյուլոն ասաց.—Մա՛րթ, մի՛ վախենար, ասված օղորմած ա, իմալ օր խազինեն խանեցիր, էս էլա կխանես, իրեք օր հալա օր կա մըզի։

Մարթն ասաց.—Գյո՛ւլո, էսօր կնաց, մնաց էրկու օր։

Գյուլոն ասաց.— Մարթ, մը վախենար, իշալահ էս բալից էլ կփրծիս։

Մարթն ասաց.—Էսօր էլ է կնաց, Գյուլո՛, մնաց մեկ օր։

Կողեր կիգան ականշ էնին, իրեք խատ կէղնին, իրարու կասեն՝ «Էսա մարթ մըզի պիտի տա թակավորի ծեռք, արեք էրթանք մըզի թալենք էս մարթու ոտ, մըզի չիտա թակավորի ծեռք, բալքի մըզի աղատա»։ Կուկան իրեքն լա զուրանք կթալեն մարթու օտ։ Կասեն՝ «Ի՞շտա մատնինկ մենք ենք կողցեր, ա՛ռ քզի մատնինկ,

մենք էլ քու հ'առեճն ենք, տու քու ասված, կուզես մըզի ազատա, կուզես տուր թակավորի ծեռ։

Մարթն ասաց.—Հա՜, ես չկիտա՞ օր տուք իք. առեք էսա մատնինկ, տարեք փաթեք խացի մեջ, թալեք կազու հ'առեճ, օր կլու, կարմիր թել մի կապեք կազու ոտ։

Մատնինկ փաթեցին խաց, տարան թալեցին կազու հ'առեճ, կազ կլուց, կարմիր թել մի կապեցին կազու ոտ, կազ քշեցին կնաց կազերու մեջ։

Օր լմցավ, թակավոր կանչեց վիճկրար, ասաց.—Արի, վիճակ պաց, մատնինկ կտիր։

Վիճկրարն ասաց.—Թակավորն ապրած կենա, մը՛ վախենար, մատնինկ կկտնիմ։

Վիճկրար վիճակ պացեց, ասաց.—Թակավոր, մարթ նշանց չի տար, էսա մատնինկ դո՞ր ա կուրուսեր ա։

Թակավորն ասաց.—Մեր տներու մեջն ա կուրուսեր ա, ուրուշ տեղ չկուրուսեր ա։

Վիճկրարն ասաց.—Քըզի կազ, խավ ունի՞ս թե չէ։

Թակավորն ասաց.—Կա։

Վիճկրարն ասաց.—Ես պետք է ըմս թալեմ կազերու, խավերու մեջ, տեսնիմ ուրանք չկլցո՞ւծ ա։

Վիճկրարն հ'ելավ կնաց թակավորու կազերու, խավերու մեջ, ասաց.—Կազեր հ'ըմեն պերեք ըստեղ։

Կազեր հ'ըմեն պերեցին։ Կազերու մեջ ըմս թալեց, տեսավ կարմիր թել կապուկ ոտ կազ՝ պռնեց, ասաց.—Էսա կազ մորթեք։

Կազ մորթեցին, փոր ծեվեցին, մատնինկ միչեն խանեցին։

Կացին թակավորին ասեցին.—Թակավորն ապրած կենա, վիճկրարն էկավ, ըմս թալեց, կազու փորեն մատնինկ խանեց։

Թակավոր կանչեց վիճկրըրին, ասաց.—Իմ տան կուշտ տուն մի կա, էն տուն տըվեցի քըզի, կաս դուն ու քու կնիկ էտոր մեջ ապրիք՝ հ'ըմեն պան իմ քըսից։

Թակավորն հ'ելավ դըլալ կանչել տվեց քաղքի մեջ, ասաց.—Վի՞ր օր պան կուրսըվեր ա, թըղ կան իմ վիճկրըրի մոտ, կտնին։

Ձեն կէրթա ուրիշ քաղքներ, հ'ըմեն տեղրանք կտարածվի, ուրիշ էրկրի թակավորներ կլսեն, ջուլաբ կէնեն էտա թակավորին, կասեն.—Ի՞նչ տեսակ վիճկրար ունիս, օր ինչ տեսակ կողութեն օր էղնի քու էրկիր, կխանա, օր իմալ ա, մենք էսա տեղեն պեռ մի պան կճամխեն, օր քու վիճկրար խանեց՝ զաթի տուն էլ աղեկ ես,

քու վիճկրարն էլ աղեկ ա, օր չխանեց՝ քու վերեն կռիվ կէնենք, քու թադարիքն էրա՛։

Թակավորն ասաց.—Բե մունա՛թ, ի՛նչ կճամխեք, ճամխեք, օր իմ վիճկրար չխանեց՝ առանց կռվի իմ թախտ կուտամ ցըղի։

Կմնա քանի մի օր, ուրիշ թակավորներ պեռ մի պան կճամխին։ Ջուլար կուկա թակավորին, թե՝ էկավ։

Թակավոր դըլալ կուտա կանչել ուր քաղաք.—Ինչքան օր ժողովուրթ կա, պիտի հ'ըմենի կաք, թամաշա էնեք։

Թակավոր վիճկրար կընծկի հ'առեճ, կէրթան քաղքի կլոխ, օր պեռ խանա ինչ էղնել։

Վիճկրար Գյուլոյին կկանչա, կասա.— Գյո՛ւլո, մեր օր լըմնցավ, թակավորի կլուխ լե տվեցինք տուրս, թախտ լե տվեցինք տուրս, մեր կլուխ լե տվեցինք տուրս։ Վա՜յ Գյուլո՛, վա՜յ-վա՜յ Գյուլո՛,— կպոռա։— Վա՜յ Գյուլո՛, վա՜յ-վա՜յ Գյուլո,— եմ լե ասելով կէրթա առեճ՝ ծեռ կղանի պեռան, կասա,—Վա՜յ Գյուլո, վայ-վա՜յ Գյուլո։

Կայերեն պեռ կպանան, պեռ կելնի պեռ մի վարթ։

Թակավոր կուկա ծեռ կղանի վիճկրրրի միճաց, կասա.—Ապրի՛ս, վիճկրրար, քու մոր պողի տակ կանչնա, ալա տյու չխասիր իր պեռան, տյու ինչ ջուտ ասեցիր Գյուլո, վա՛րթ ա։

Ջուլաբ կէրթա ճամխող թակավորին, կասին. «Թե ուրիշ պան մի կա՝ ճամխե։ էտի հեչ, կես սահաթ հեռուն ճամխուն պոռաց, ասաց՝ Գյուլո՛, Գյուլո»։

Էն թակավոր ջուլար էրաց, էսաց.—Ապրիս տուն ու քու վիճկրրար, տուն ընձի ճոչ, ես քըզի պրստիկ։

Ասուծ իշավ իրեք խնծոր, մեկ ասողին, մեկ՝ սովրողին, մեկ լե շաղամաթին։